

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՄԱՆՆԻՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Յ. ձ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԼՈՒԽ Գ.

ՌՈՒՄԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԹԻԻԸ
ՁԱՆԱԶԱՆ ԴԱՐԵՐՈՒ ՄԷՋ

ԴԺՈՒՄՐ է այս գլուխը գրել: Որովհետև ապերախ աշխատանք է գլուխ ճաթեցնել քանի մը թիւեր կորցելու համար անյայտութեան երախէն:

Առհասարակ ժլատ է հայ պատմութիւնը թիւերու տեսակետով: Մեր անցեալ կեանքին ոչ մէկ շրջանը կրնայ թիւերով խօսիլ մեզի հետ: Ոչ մէկ վիճակագրութիւն անցեալին մէջ՝ որ քիչ մը լոյս բերէր իրմէ առջի ու ետքի շրջաններուն վրայ:

Ու հետեւաբար յաւակնութիւն չունենանք նաև ճշգրիտ այս դադուրի հայութեան թիւը դանազան շրջաններու մէջ: Մեր նախնիքը ժլատ են եղեր թիւերով իրենց կեանքը արձանագրելու: Բայց շատ ալ չմեղադրենք մենք դանոնք, երբ այսօր իսկ, հակառակ շատ մը դիւրութիւններու, որեւէ վիճակագրութիւն չունինք մեր դադուրի ներկայ համրանքին մասին, նոյնիսկ վեր ի վերոյ թիւերով: Թիւերը զոր մեր դադուրի ներկային մասին կուտան դանազան հայ եւ օտար վիճակագրութիւններ՝ մտացածին համրանքներ են, իրականութենէ շատ հեռու: Ի՞նչպէս կ'ուզէք որ ներկայ ուղմանահայութիւնը համրուի, երբ նոյնիսկ սա մեր Պուրէշին հաշիւը կարող չեղանք ճշգրիտ: Եւ ի՞նչպէս կ'ուզէք որ դարերուն հաշիւը տամ ես ձեզի:

Եթէ բան մը կորցեմ գրքերու եւ թուղթերու մէջէն՝ ան ալ տուէք զիպուածին:

* * *

Հայերը սկսան Ռուսմանիա գալ ԺԱ. դարէն սկսեալ:

Բայց ոչ մէկ տեղեկութիւն հասած է մեզի առաջին եկողներու թիւի մասին:

Յայանի է, սակայն, որ բազմաթիւ էին:

Հայր Մ. Բժշկեանց կը գրէ թէ «Յամի Տեառն 1060, երբ Անի անցեալ էր ի ձեռս օ-

տարայ, բազմութիւն Անցեւոց եւ շրջաքնակ ազգայնոց միարանեալ էլին ի Հայաստանէ, եւ սկսան ուղեւորիլ դէպի Լեհաստան եւ Մոլտավիա: Ապա յամի տեսուն 1064, իբրև առին Պարսիկք եւ կողոպտեցին զԱնի, մեծ մասն բնակչաց ելեալ անտի հետեւեցան զկնի նախընթաց չուեյոց դէպի Մոլտավիա, եւ անտի ի Լեհաստան»: (Ճանապարհորդութիւն, էջ 83):

* * *

Ռուսմանահայ դադուր թէև ԺԱ. դարէն կը սկսի կազմուիլ, բայց ԺԳ. դարէն յետոյ է որ ան զգալի կը դառնայ իր թիւով:

Դժբախտաբար որեւէ տեղեկութիւն կը պակսի մեզի: Գիտենք միայն որ Տրակոշ Վոտայի օրով (1352-1353), երբ կը կազմուի Մոլտավ իշխանութիւնը, արդէն շատ մը հայեր կան կարգ մը գլխաւոր քաղաքներու մէջ, մասնաւորապէս Եաշ, Պոթոշան եւ Մուչօվա:

Ձենք զիտեր սակայն թէ քանի՞ ընտանիք էին: Պատմութիւնը կը յիշատակէ միայն թէ այնքան աճած էին անոնք որ իրենց սեփական եկեղեցին ունեցան այդ դարուն յիշեալ երեք քաղաքներուն մէջ:

* * *

ԺԵ. դարուն է որ հայոց թիւը զգալի կերպով կը շատնայ Մոլտավայի մէջ: Ալեքսանդրէէլ-Պուն իշխանին օրով, 1418-ին, 3000-ի չափ հայ ընտանիքներ բնակութիւն կը հաստատեն Մոլտավայի 7 քաղաքներուն մէջ (Մուչօվա, Աքքէրման, Չէթաթէ Ալպա, Կալպ, Վասլիու, Եաշ, Պոթոշան եւ Հօթին), իսկ Շթէֆան-Չէլ-Մարէի օրով, 1475-ին, աւելի կը ստուարանայ այդ թիւը (Տ. Տան, Արեւելեան Հայք ի Պուֆուլիկա, էջ 10):

Մուչօվա, Սերէթ, Չէրնօվից, Աքքէրման, Եաշ եւ Պոթոշան քաղաքներն են որ, ամենէն աւելի, հոծ թիւով հայեր կ'ունենան: ԺԵ. դարու վերջը միմիայն Մուչօվայի մէջ 700 հայ ընտանիքներ կային, կ'ըսէ Լուքաչ հունգարահայ պատմիչը: